Գիւղում կայ մի եկեղեցի Ս. Յովհաննէս անունով։ Դպրոց չունի։ Ժողովրդի մեծամասնութիւնը անգրագէտ է։

№	ԿԱՐԳԵՐ	Շունչ
1	Աղքատ	100
2	Ջունևոր	38
3	Միջակ	100
4	Ունևոր	40
5	Հարուստ	20
	Ընդամենը	298

ԲԱՐԴԱՇԱ.

Աղիդանից դէպի հարաւ—արևելք, երկու ֆարսախ հեռաւորութեամբ, մի բարձր դաշտի վրայ փռուած է պարսկահայաբնակ Բարդաշա գիւղը, ուր հայ տների թիւը 45 է՝ 272 բնակչով, որից 155-ը արական է և 117-ը իգական։ Գիւղի դիրքը գեղեցիկ է. զարդարուած է ուռենիների, բարդիների և կաղամախիների խիտ շարքերով և ունի հարուստ վարելահողեր ու արօտներ, որոնք փռուած են գիւղի արևմտեան կողմը, և գիւղին տալիս են առանձին շքեղութիւն և վեհութիւն, իսկ չորս կողմը ցցուած են չորս զալաներ, ուր նստում են աղաները։

Գիւղի հիմք գցողները եկած են Միլակերտից 32 տարի առաջ. նրանք միջահասակ են և հիւրասէր. պարապում են հողագործութեամբ և մասամբ էլ խաշնարածութեամբ։

Գիւղն «առբաբ»ի—կալուածատիրական է, որոնք են Մամ-Վէլի, Ալի-Մարդան, Իսմայել և Մանտնի։ Գիւղացիները հող չունեն. նրանք մշակում են առբաբների հողերը և արդիւնքի $^1/_3$ մասը տալիս են նրանց, նաև տարեկան վճարում են

Մարդալուխ	$2^1/_2$ զռան.	Ոչխարին	10 շայի.
Էշին	1 »	Կովին	1 զռան.

Բացի սրանցից գիւղացիներն իւրաքանչիւր տարի կալուածատէր խաներին տալիս են այնպիսի հարկեր, որոնք օրինական որևէ հիմք չունեն, բայց և այնպէս լուռ վճարում